Կիրակնօրյա ընտրությունը

«Ի՞նչ է հաղորդությունը»,- հարցրեց Անիտան:

Ռեբեկա Ջեյքման
(Հիմնված է իրական պատմության վրա:)

Այս պատմությունը տեղի է ունեցել Իսլանդիայում:

«Ավելի բարձր»,- ասաց Էվոլետն իր ընկեր Անետային: Նրանք փորձում էին, թե որքան բարձր կարող են ցատկել Էվոլետի բատուտի վրա:

Հենց այդ պահին Անիտան ցատկեց շատ բարձր: Երբ նա կրկին ցած իջավ, Էվոլետը վեր հրվեց: Աղջիկները բախվեցին ու ցած ընկան բատուտի վրա: Նրանք ծիծաղեցին:

«Սա այնքան զվարճալի է»,- ասաց Անիտան: «Կարո՞ղ ենք վաղը նույնպես խաղալ»:

Էվոլետը մոտեցավ նրան: «Այո՛: Մեծ սիրով»:

Մենք կարող ենք խաղալ տատիկիս տանը»: Անիտայի տատիկն ապրում էր Էվոլետից մի քանի տուն հեռավորության վրա:

Էվոլետը հիշեց, որ հաջորդ օրը կիրակի էր: Նա ուզում էր հաճախել Երեխաների միություն: Անիտայի հետ խաղալը զվարճալի կլիներ, բայց նա ցանկանում էր լավ ընտրություն կատարել:

«Ես հենց նոր հիշեցի, որ չեմ կարող»,- ասաց Էվոլետը: «Կներես: Վաղը ես իմ ընտանիքի հետ գնալու եմ եկեղեցի»:

Անիտան վեր կացավ և նորից ցատկեց: «Ինչո՞ւ»:

Էվոլետը նույնպես սկսեց ցատկել: «Դե, ես ուզում եմ հետևել Հիսուս Քրիստոսին»: Իմ ընտանիքն ամեն կիրակի հաճախում է եկեղեցի՝ սովորելու Նրա մասին և ճաշակելու հաղորդությունը»:

«Ի՞նչ է հաղորդությունը»,- հարցրեց Անիտան:

«Դա այն է, երբ մենք ուտում ենք մի փոքր կտոր հաց և խմում ենք մի փոքր բաժակ ջուր, որպեսզի հիշենք Հիսուս Քրիստոսին»,- ասաց Էվոլետը: «Ապա մարդիկ խոսում են այն մասին, թե Հիսուսն ինչպես է օգնում իրենց: Իսկ դրանից հետո հատուկ դաս է լինում երեխաների համար»:

«Զվարճալի է թվում»,- ասաց Անիտան: «Ես կարո՞ղ եմ գալ»:

«Իհարկե»,- ժպտաց Էվոլետը:

Անիտան վազեց տուն՝ հարցնելու իր տատիկին, թե արդյոք կարող է եկեղեցի գնալ Էվոլետի հետ: Հաջորդ առավոտյան Էվոլետն ու իր ընտանիքը եկեղեցի գնալու ճանապարհին Անիտային վերցրին իրենց հետ:

Երբ հասան եկեղեցի, Էվոլետը ցույց տվեց Անիտային այնտեղ ամեն բան: Նա ցույց տվեց Երեխաների միության սենյակը, մարզասրահը և հաղորդության սենյակը:

Շուտով եկավ հաղորդության ժողովի ժամանակը: Էվոլետն ու Անիտան միասին նստեցին: Հաղորդության ժամանակ Էվոլետը փորձում էր մտածել Հիսուս Քրիստոսի մասին: Ապա նրանք լսեցին ելույթները:

Շուտով եկավ Երեխաների միության ժամանակը: Էվոլետը Անիտային ծանոթացրեց իր ընկերներից մի քանիսի հետ:

«Սա իմ ընկերուհի Անիտան է»,- ասաց Էվոլետը:

«Շատ ուրախ ենք, որ եկել եք այսօր: Ես քույր Մագնուսոնն եմ»,- ասաց Երեխաների միության ուսուցիչը:

Երբ Էվոլետն ու Անիտան լսում էին Հիսուս Քրիստոսի մասին դասը, Էվոլետը ներքուստ երջանիկ էր զգում: Նրան դուր էր գալիս եկեղեցում լինել Անիտայի հետ: Նա շրջվեց և ժպտաց Անիտային: Ընկերուհին ժպտաց նրան՝ ի պատասխան:

«Շնորհակալ եմ ինձ հրավիրելու համար»,- ասաց Անիտան տուն գնալու ճանապարհին:

Էվոլետն ուրախ էր, որ կարող էր հետևել Հիսուս Քրիստոսին: Եվ նա ուրախ էր, որ Անիտան նույնպես ցանկանում էր իմանալ Նրա մասին:

Զվարճալի էր ցատկել բատուտի վրա և թռչել օդում, բայց Էվոլետի ներսում առկա ջերմ զգացումն ավելի զորեղ էր: ●

ՆԱՄՈՒՇՐԸ՝ ՖՐԻԼԱ ՓՈՒԵՐԻՍ



Դուք ո՞ւմ կարող եք հրավիրել եկեղեցի գալ ձեզ հետ: